

**ԴԱՎԻԹ ՀՈՒՆԱՆՅԱՆ**

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ



**ԳՈՐԾԸ ՄԵՂԱԴՐՈՂԻՆ ՎԵՐԱԴԱՐՉՆԵԼՈՒ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ  
ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ ՀՀ  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Երկու հազար յոթ թվականի հուլիսի քսանչորսին Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) սահմանադրական դատարանն ընդունեց որոշում՝ քաղաքացի Գևորգ Գգրարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.) 311-րդ հոդվածի 2-րդ կետի, 414.2.-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով (այսուհետ՝ ՍԳՌ-710 որոշում), որով քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու ինստիտուտը ճանաչվեց ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին (առաջին մաս) հակասող և անվավեր: Այսպիսի ճակատագրի չարժանացավ միայն ՀՀ քր. դատ. օր. 274-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որի համաձայն՝ դատախազը մեղադրական եզրակացությամբ գործը ստանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, պարտավոր է ընդունել 274-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը, որոնց թվում է նաև լրացուցիչ քննություն կատարելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու նպատակով իր ցուցումներով գործը քննիչին վերադարձնելու մասին որոշումը:

Իրերի նման ընթացքը շատ տեսաբաններ համարում են լիովին արդարացված և հիմնավորված. ինչպես նախկինում, այնպես էլ ՍԳՌ-710 որոշման ընդունումից հետո հնչում են համանման կարծիքներ. «Մրցակցության, անմեղության կանխավարկածի, կասկածների փարատման, անկախ և տեսանելիորեն անաչառ դատարանի գաղափարների լույսի և ջերմության տակ խորհրդային այս քաղցկեղային վտանգներ պարունակող խալը չէր կարող հօղս չցնդել քրեական դատավարության դեմքի վրայից»<sup>1</sup>:

Մինչ ՍԳՌ-710 որոշման ընդունումը քրեա-

կան դատավարության ընթացքում գործը լրացուցիչ նախաքննության կարող էր ուղարկվել երեք դատավարական սուբյեկտի՝ դատախազի, դատավորի կամ դատարանի կողմից հինգ դատավարական փուլերի ընթացքում. դրանք են՝ նախնական քննության փուլը, դատական քննության նախապատրաստման փուլը, վարույթն առաջին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ դատարաններում:

Դատախազը մեղադրական եզրակացությամբ գործը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում պարտավոր էր ընդունել ՀՀ քր. դատ. օր. 274-րդ հոդվածում թվարկված որոշումներից մեկը, որոնց շարքում էր «լրացուցիչ քննություն կատարելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար իր ցուցումներով գործը քննիչին վերադարձնելու մասին» որոշումը: Օրենսդրության վերլուծությունից պարզ է դառնում, որ դատախազը նման որոշում կայացնում է, եթե՝ 1. առկա են հիմքեր մեղադրանքը լրացնելու կամ այն առավել ծանր կամ փաստական հանգամանքներով նախորդ մեղադրանքից էապես տարբերվող մեղադրանքով փոխարինելու համար, 2. նախաքննության ընթացքում լրիվ չեն հետազոտվել գործի բոլոր հանգամանքները, 3. հանրորեն վտանգավոր արարքի մեջ մեղավոր ոչ բոլոր անձինք են ներգրավվել որպես մեղադրյալ, 4. խախտվել են դատավարության մասնակիցների իրավունքները<sup>2</sup>:

Նախնական դատական վարույթի արդյունքում դատավորը պարտավոր էր ընդունել ՀՀ քր. դատ. օր. 292-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը, այդ թվում՝ «գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին» որոշումը: Ընդ որում, դատավորն այդպիսի որոշում ընդունում էր, եթե հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից թույլ էին տրվել քրեադատա-

www.moj.am

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վարական օրենքի էական խախտումներ, որոնք չէին կարող վերացվել դատական քննության ընթացքում (ՀՀ քր. դատ. օր. 297-րդ հոդված): ՀՀ քր. դատ. օր. 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեադատավարական օրենքի էական խախտումներ են օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Առաջին ատյանի դատարանը դատական քննության ընթացքում կարող էր ընդունել մի շարք դատական որոշումներ. «Այն բոլոր հարցերի առթիվ, որոնք լուծվում են դատարանի կողմից դատական քննության ժամանակ, դատարանը որոշումներ է կայացնում» (ՀՀ քր. դատ. օր. 313-րդ հոդվածի 1-ին մաս): Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու որոշման ընդունման հիմքերը երկուսն էին՝ 1. երբ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից թույլ էր տրված քրեադատավարական օրենքի էական խախտում, որը չէր կարող վերացվել դատական քննության ընթացքում, 2. երբ առկա էին մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր: Վերջին դեպքում դատարանը գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշում կայացնում էր միայն մեղադրողի միջնորդության հիման վրա (ՀՀ քր. դատ. օր. 311-րդ հոդված):

Վերաքննիչ դատարանը քրեական գործի քննության արդյունքում կայացնում էր ՀՀ քր. դատ. օր. 394-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը, այդ թվում՝ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշումը, եթե առկա էին 311-րդ հոդվածում ամրագրված հիմքերը:

Դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը կարող էր ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել գործը և բեկանված մասով գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության կամ համապատասխան ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության: Չբեկանված մասով դատական ակտը մնում էր օրինական ուժի մեջ: Դատավճիռը ենթակա էր բեկանման՝ գործը

նոր նախաքննության ուղարկելով, եթե թույլ էր տրվել քրեադատավարական օրենքի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի էական խախտում, որը չէր կարող վերացվել դատական քննության ժամանակ (ՀՀ քր. դատ. օր. 419-րդ, 421-րդ հոդվածներ):

Տեսական գրականության մեջ մինչ օրս գերիշխում է այն կարծիքը, որ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտն ուղղված է նախորդ դատավարական փուլում կոնկրետ դատավարական սուբյեկտի կողմից իրականացված աշխատանքում տեղ գտած թերությունների շրտկմանը: «Գործող քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է տարբեր եղանակներ՝ լրացնելու համար նախնական քննության ընթացքում տեղ գտած բացթողումները: Դրանց թվում կարևոր նշանակություն ունի գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելը»<sup>3</sup>: Ընդ որում, շատ դատավարագետներ բացասական են ընդունում այս ինստիտուտի վերացման փաստը. նրանք, որպես հիմնական փաստարկ, առաջ են քաշում այն գաղափարը, որ միայն լրացուցիչ նախաքննության արդյունքում է ստեղծվում իրական հնարավորություն վերացնել այն թերությունները և հակասությունները, որոնք դատարանին զրկում էին գործով դատավճիռ կայացնելու հնարավորությունից, նրանք մասնաշեղծ են, որ լրացուցիչ նախաքննությունից հետո գործերի մեծ մասը նորից մտնում էր դատական քննության փուլ և դրանցով կայացվում էին հիմնավորված մեղադրական դատավճիռներ»<sup>4</sup>:

Մինչ 2007թ. քրեական դատավարության օրենսդրությունում տեղի ունեցած փոփոխությունները գործը դատարանի կողմից կարող էր վերադարձվել մեղադրողին նախնական դատական վարույթի (ՀՀ քր. դատ. օր. 296-րդ հոդված) ընթացքում դատավարական օրենսգրքի պահանջներին և, մյուս կողմից, քրեական գործի նյութերին մեղադրական եզրակացության անհամապատասխանության դեպքում<sup>5</sup>: Նման թերությունները վերացնելու նպատակով՝ դատախազը (մինչ նախնական դատական վարույթը) կարող էր ընդունել որոշում՝ գործը քննիչին վերադարձնելու վերաբերյալ (ՀՀ քր. դատ. օր. 274-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ): 2007 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով գործը մեղադ-

րողին վերադարձնելու ինստիտուտը մուտք է գործում նաև դատական քննության փուլ: Առավել ևս, որ մինչ այդ 2007 թվականի փետրվարի 22-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ Դատախազության մասին» ՀՀ օրենքով նման ընթացակարգ արդեն նախատեսվել էր (թեև, հաշվի առնելով նշված ակտերի ենթակարգությունը, առաջին հերթին օրենսգրքում պետք է ամրագրում ստանալին նշված դրույթները), իսկ ՀՀ սահմանադրական դատարանը նույնիսկ 2007 թվականի հուլիսի 24-ին իր կողմից ընդունված ՍԳ-Ո-710 որոշման մեջ հղում էր կատարել «ՀՀ Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածին:

Ռուսաստանի Դաշնության (այսուհետ ՌԴ) քրեական դատավարությունը, ինչպես նաև ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը հրաժարվել են լրացուցիչ նախաքննության ինստիտուտից, որի փոխարեն ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՌԴ քր. դատ. օր.) 237-րդ հոդվածը նախատեսում է, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ դատավորը սեփական նախաձեռնությամբ կամ կողմերից մեկի միջնորդությամբ վերադարձնում է քրեական գործը դատախազին դատարանի կողմից այն քննելու խոչընդոտները վերացնելու նպատակով, եթե՝ 1. մեղադրական եզրակացությունը կամ ակտը կազմված են օրենսգրքի պահանջներին ոչ համապատասխան, ինչը բացառում է դատարանի կողմից դատավճռի կամ այլ որոշման ընդունման հնարավորությունը տվյալ եզրակացության կամ ակտի հիման վրա, 2. մեղադրական եզրակացության կամ ակտի կրկնօրինակը չի տրվել մեղադրյալին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը հիմնավոր և օրինական է ճանաչում դատախազի՝ ՌԴ քր. դատ. օր. 222-րդ հոդվածի 4-րդ մասով կամ 226-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգով ընդունված որոշումը, 3. առաջացել է անհրաժեշտություն կազմել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վերաբերյալ որոշմամբ մեղադրական եզրակացություն կամ ակտ և ուղարկել դատարան, 4. առկա են ՌԴ քր. դատ. օր. 153-րդ հոդվածով նախատեսված քրեական գործերի միացման կամ անջատման հիմքերը, 5. մեղադրյալի կողմից գործի նյութերին ծանոթանալու ժամանակ նրան չեն բացատրվել ՌԴ քր. դատ. օր. 217-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավունքները: Ընդ որում, դատարանը դատախազին պարտա-

վորեցնում է հինգ օրվա ընթացքում ապահովել թույլ տրված սխալների վերացումը և դատախազին վերադարձված գործով՝ տվյալ հոդվածով չնախատեսված քննչական կամ այլ դատավարական գործողությունների իրագործումն արգելվում է: Միաժամանակ, հնգօրյա ժամկետի ավարտից հետո կամ տվյալ հոդվածով չնախատեսված դատավարական գործողությունների կատարման արդյունքում ստացված ապացույցները ճանաչվում են անթույլատրելի: Ավելացնենք նաև, որ ՌԴ սահմանադրական դատարանը, մեկնաբանելով գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտի սահմանադրա-իրավական իմաստը, իր 2003 թվականի դեկտեմբերի 8-ի N18-կ որոշմամբ՝ ՌԴ քր. դատ. օր. 237-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է ՌԴ Սահմանադրությանը չհակասող, քանի որ դրանում պարունակվող դրույթներն իրենց սահմանադրաիրավական իմաստով իրավունքի նորմերի համակարգում չեն բացառում դատարանի իրավասությունը քրեական գործը սեփական նախաձեռնությամբ կամ կողմերից մեկի միջնորդությամբ վերադարձնել դատախազին, եթե մինչդատական փուլում թույլ են տրվել դատավարական օրենքի էական խախտումներ, որոնք հնարավոր չէ վերացնել դատական քննության ընթացքում, եթե գործը վերադարձնելը կապված չէ հետաքննության կամ նախաքննության բացերը լրացնելու հետ:

ՌԴ քր. դատ. օր.-ում նման ընթացակարգի նախատեսումը բազմաբովանդակ քննարկումների տեղիք է տվել: Մասնավորապես, Վ. Ազարովը, Ա. Բարանովը և Ս. Սուպրունը կարծում են, որ՝ «տրվյալ ինստիտուտի էությունը կայանում է նախնական քննության մարմինների կողմից հնգօրյա ժամկետում քրեական գործով դատավարական գործողությունների կատարման մեջ՝ դատարանի կողմից բացահայտված քրեադատավարական օրենքի էական խախտումները վերացնելու նպատակով՝ առանց նոր ապացույցների ձեռքբերման իրավունքի»<sup>7</sup>: Օ.Վ. Վոլկովուպը կարծում է, որ ՌԴ քր. դատ. օր. 237-րդ հոդվածն իրենից ներկայացնում է նոր քրեադատավարական մեխանիզմ՝ ուղղված բացառապես ձևական խախտումների շտկմանը, որոնք թույլ են տրվել նախնական քննության մարմինների կողմից, և խոչընդոտ են հանդիսանում գործն ըստ էության քննելու համար<sup>8</sup>: Ա. Ալեքսանդրովը և Ս. Բելովը մատնանշում են, որ օրենսդիրը ձգտել է գործը դատախազին վերադարձնելու ինս-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տիտուտին տալ դատական քննության ընթացքում ծագած խոչընդոտների վերացմանն ուղղված տեխնիկական սարքավորման բնույթ<sup>9</sup>: Ե.Վ. Եժովան կարծում է, որ ուսումնասիրվող ինստիտուտի էությունը (նրա ներքին կողմը) ներկայացնելու համար անհրաժեշտ է ընդունել հետևյալը. «մենք ելակետ ենք համարում այն, որ գործը դատախազին վերադարձնելը դատարանի հսկողական մեխանիզմ է նախնական քննության նկատմամբ, քանի որ Ռուսաստանի քրեական դատավարությունը կառուցված է այնպես, որ յուրաքանչյուր հաջորդ փուլ հսկողություն է իրագործում նախորդի նկատմամբ»<sup>10</sup>: Լիովին համաձայնելով հեղինակի այս կարծիքի հետ և վերացարկելով այն հայրենական քրեական դատավարության մեջ՝ նշենք նաև, որ կան հեղինակներ, որոնք կարծում են, որ գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտում իր արտահայտությունն է գտել նախկինում գոյություն ունեցող լրացուցիչ նախաքննության ինստիտուտը<sup>11</sup>, իսկ որոշ տեսաբաններ հանդես են գալիս լրացուցիչ նախաքննության վերականգման տեսանկյունից<sup>12</sup>:

ՀՀ քրեական դատավարությունում տեղի է ունեցել նախկինում մերժված դրույթների քողարկում մեկ այլ ընթացակարգի շրջանակներում:

Այսպես, ի տարբերություն ՌԴ դատավարական օրենսդրության մեջ ամրագրված մոտեցման՝ հայրենական տարբերակում մեղադրողը ոչ թե վերացնում է դատավարական օրենքի էական խախտումները՝ առանց մեղադրանքը լրացնելու, այլ անմիջականորեն մշակում է այն: ՀՀ քր. դատ. օր. 309<sup>1</sup> հոդվածը, զարգացնելով «ՀՀ Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթները, ամրագրում է. «Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը **խստացման կամ մեղմացման**<sup>13</sup> առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և **չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում**, և եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս **մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու**, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրո-

ղը մնան միջնորդությամբ կարող է հանդես գալ **մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը**» (ՀՀ քր. դատ. օր. 309<sup>1</sup> հոդվածի 1-ին մաս): Հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է **ավելի երկար ժամկետ**: Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, **որը ձեռք բերված նյութերի հետ ներկայացնում է դատարան** (ՀՀ քր. դատ. օր. 309<sup>1</sup> հոդվածի 2-րդ մաս): Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալ փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղաազրվում է (ՀՀ քր. դատ. օր. 309<sup>1</sup> հոդվածի 3-րդ մաս): Եթե դատաքննության ընթացքում պարզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերաորակելու որոշում չի կայացնում կամ վերաորակելու համար դատական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա **դատարանն իր նախաձեռնությամբ** մինչև 10 օր ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը: Մեղադրական եզրակացությունը վերահաստատելուց հետո դատարանը, մեղադրական եզրակացությանը համապատասխան, կայացնում է դատական ակտ:

Օրենսդիրն այնքան ուղղակի և ակնհայտ է վերակենդանացրել լրացուցիչ նախաքննության ինստիտուտը, որ այլակարծիքությունը բացառվում է: Միաժամանակ, առկա են որոշակի յուրահատկություններ, մասնավորապես՝

- որպես մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

լու վերաբերյալ միջնորդության ներկայացման անհրաժեշտություն է նախատեսվում նաև առաջադրված մեղադրանքի մեղմացումը,

- մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը պետք է ներկայացվի միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում՝ հուշելով մեղադրանքի լրացման կամ փոփոխման անհրաժեշտության մասին,

- օրենսդիրը չի բացառում մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու հնարավորությունը առանց դատական քննությունը հետաձգելու, և ամրագրում է, որ մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը պետք է ներկայացվի միայն այն դեպքում, երբ գործի փաստական հանգամանքները նման հնարավորություն չեն տալիս,

օրենսդրի մոտեցման համաձայն՝ եթե գործն ընդունվել է դատական վարույթ, ապա այն պետք է հանգուցալուծվի դատական նիստում<sup>14</sup>, և մեղադրանքը փոփոխվում կամ լրացվում է առանց լրացուցիչ նախաքննության՝ դատական քննության հետաձգման ժամանակահատվածում անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ կատարելու միջոցով,

- նախկինում լրացուցիչ նախաքննության համար ՀՀ քր. դատ. օր. 197-րդ հոդվածով նախատեսված ժամկետները առանց փոփոխության սահմանվել են նաև դատարանի կողմից գործը մեղադրողին վերադարձնելու դեպքերի համար,

- եթե ՀՀ քր. դատ. օր. 311-րդ հոդվածի 2-րդ կետով դատարանը լրացուցիչ նախաքննության որոշում ընդունում էր միայն մեղադրողի միջնորդությամբ, ապա ներկայումս դատարանը սեփական նախաձեռնություն է ցուցաբերում մեղադրանքը մշակելու համար:

Ավելացնենք նաև՝ քրեադատավարական օրենքի էական խախտումը, լիովին անհասկանալի կերպով, որպես գործը մեղադրողին վերադարձնելու հիմք նախատեսված չէ, և, սկզբունքորեն, ռուսաստանյան մոտեցումը, կապված (առանց նախնական քննության բացերը լրացնելու) նմանօրինակ խախտումների շտկման հետ, լիովին կիրառելի է նաև հայրենական դատավարությունում, ուր միայն նախնական դատական վարույթում է կիրառվում քրեական օրենսգրքի պահանջներին մեղադրական եզրակացության անհամապատաս-

խանությունը վերացնելուն ուղղված ընթացակարգը, և ենթադրվում է, որ տվյալ անհամապատասխանությունը կարող է շտկվել և պետք է շտկել նաև դատավարության այս փուլում:

Ուշագրավ է, որ տեսական գրականության մեջ փորձեր են արվել ընդգծել այն հանգամանքի կարևորությունը, որ դատական քննության ընթացքում կարող են ի հայտ գալ այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և ուղղակիորեն վկայում են մեղադրանքի փոփոխության կամ լրացման մասին: Մասնավորապես, Օ.Յ. Բակն իր մենագրությունում նշում է. «...դատական պրակտիկայում կարող են հանդիպել (և արդեն հանդիպում է) այնպիսի իրավիճակներ, երբ դատական քննության ընթացքում բացահայտվում են նոր հանգամանքներ, որոնց ստուգումն անմիջականորեն դատաքննության ընթացքում անհնար է: Նշենք, որ նման անհնարիության ընկալման վրա է հիմնված պրոֆեսիոնալ պաշտպանության տարածված հնարքներից մեկը. պաշտպանը ձեռք է բերում ապացույցներ, որոնք վկայում են նախկինում նախնական քննության մարմինների համար անհայտ և մինչև դատական քննությունը գոյություն ունեցող հանգամանքների մասին՝ դրանով դատաքննության ընթացքում ստեղծելով պաշտպանյալի՝ քրեական հետապնդման հիմնավորված լինելու վերաբերյալ անհերքելի կասկածներ»: Շարունակելով միտքը՝ հեղինակը ևս մեկ անգամ նշում է. «... խոսքը ոչ թե դատական քննության ընթացքում մինչդատական վարույթում քրեական գործով թույլ տրված բացթողումների լրացման, այլ դատարանի կողմից գործի քննության ընթացքում նոր ի հայտ եկած հանգամանքներին արձագանքելու անհրաժեշտության մասին է, այնպիսի հանգամանքների, որոնց ի հայտ գալու կանխատեսումը նախնական քննության ընթացքում գործնականում անհնար է եղել»<sup>15</sup>:

Կարծում ենք՝ հեղինակը տվյալ դեպքում կարծես նոր ի հայտ եկած հանգամանքներով գործի նորոգման ընթացակարգը էքստրապոլյացիայի է ենթարկում առաջին ատյանի դատարանում գործի քննության վրա՝ այն տարբերությամբ, որ գործի (տվյալ դեպքում՝ նախաքննության) նորոգումը բխում է մեղադրանքի կողմի շահերից: Օ.Յ. Բակը, շարունակելով միտքը, հղում է կատարում նաև Ա. Սմիրնովի և Կ. Կալինովսկու հայտնած մտքին<sup>16</sup>.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«Քրեական դատավարության օրենսգիրքը<sup>17</sup> չի պարզաբանում «այլ, նոր ի հայտ եկած հանգամանքների» բովանդակությունը (այն հանգամանքների, որոնց մասին այստեղ խոսվում է), սակայն կասկած չի հարուցում այն, որ դրանք են «այն հանգամանքները, որոնք անհայտ են դատարանին դատական որոշում կայացնելիս<sup>18</sup>, և վկայում են դատավճռի կամ ըստ էության կայացված այլ որոշման ոչ օրինական (սխալ) լինելու մասին»:

Լիովին համաձայնելով հեղինակի հետ՝ կարծում ենք, որ խոսքը լրացուցիչ նախաքննության որակապես նոր կամ գործը մեղադրողին վերադարձնելու ինքնուրույն հիմքի մասին է, որի ծնունդը պայմանավորված է մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու անհրաժեշտությունը պայմանավորող և դատական քննության ընթացքում բացահայտված հանգամանքների շարքում դասակարգում իրագործելու հետ: Իսկ նման դասակարգման չափանիշ է հանդիսանում մինչդատական վարույթի ընթացքում դատական քննության փուլում նման հանգամանքների բացահայտման կանխատեսման անհնարինությունը, կամ, առհասարակ, նախնական քննության մարմինների հիմնավոր անընդունակ լինելը՝ բացահայտելու տվյալ հանգամանքները նախնական քննության փուլում: Սակայն ողջ հիմնախնդիրը նրանում է, որ ընդհանուր՝ բոլոր գործերի վրա տարածվող չափանիշներ, կարծում ենք, չկան՝ որոշելու համար, թե արդյոք առկա է եղել նման անընդունակություն և անհնարինություն, թե ոչ: Տվյալ դեպքում, պետք է ղեկավարվել կոնկրետ գործի հանգամանքներով:

Միևնույն ժամանակ, պետք է նշել նաև հետևյալը. ՀՀ սահմանադրական դատարանը լիովին անհասկանալի կերպով լրացուցիչ նախաքննության հակասահմանադրականությունը հիմնավորելուց հետո հավանության է արժանացնում «ՀՀ Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում տեղ գտած գործը մեղադրողին վերադարձնելու ընթացակարգը, որի պայմաններում կենսագործվում են այն նույն լծակները, որոնք անընդունելի են համարվում լրացուցիչ նախաքննության ինստիտուտի դեպքում: Մասնավորապես խոսքը՝ 1. ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքին հակադրվող մեկամսյա (և նույնիսկ երկարացման հնարավորություն ունեցող) ժամկետի մասին է, 2. մրցակցության, անմեղության կանխավարկածի սկզբունքին, չփարատված կասկածները

հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու՝ դատավարական կանոնին, դատարանի անաչառության և անկողմնակալության գաղափարին հակադրվող մեղադրանքի կողմի և դատարանի համագործակցության մասին է, համագործակցություն՝ ուղղված մեղադրանքը կատարելագործելուն կամ, ինչպես ՀՀ քր. դատ. օր. 309<sup>1</sup> հոդվածում է ձևակերպված, մեղադրանքը լրացնելուն կամ փոփոխելուն: Պետք է նշել նաև, որ ՀՀ քր. դատ. օր. 309<sup>1</sup> հոդվածի 2-րդ կետում ուղղակիորեն ամրագրված չէ, թե ով է իրավասու երկարացնել նշված ժամկետը: Հոդվածի ընդհանուր իմաստից կարելի է միայն ենթադրել, որ նման որոշում կարող է ընդունել միայն դատական նիստը հետաձգելու մասին որոշում ընդունած դատարանը:

Հուսադրող է, կարծես, միայն այն հանգամանքը, որ ի տարբերություն լրացուցիչ նախաքննության մեզ հայտնի բովանդակության, երբ դատարանը օժանդակում էր նախնական քննության մարմինների գործողություններում առկա բացթողումների լրացմանը կամ թերությունների շտկմանը, որոնք նրանք կարող էին թույլ չտալ և պետք է թույլ չտալին, գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտում իր զարգացումն է գտել դատարանի կողմից մինչդատական փուլի նկատմամբ իրագործվող վերահսկողության մեխանիզմը՝ մեղադրանքի լրացումը կամ փոփոխումը կապելով ոչ թե թերի նախաքննության, այլ օբյեկտիվ հիմքերով կոնկրետ հանգամանքների բացահայտման անհնարինության հետ:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ հայրենական քրեական դատավարությունը որդեգրել է լիովին նոր (ՌԴ քրեադատավարական օրենսդրության համեմատ՝ լրացված) մոտեցում դատական քննության ընթացքում դատարանի կողմից մինչդատական վարույթի նկատմամբ հրսկողական մեխանիզմների կիրառման հարցում, որի էությունը կայանում է ոչ թե նախնական քննության թերությունները շտկելու, այլ նախնական քննությանը գործնականում անհասանելի հանգամանքների ստուգման մեջ, ինչը ևս, ինչպես լրացուցիչ նախաքննությունը, ուղղված է օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը: Մյուս կողմից, դատավարությունը տվյալ դեպքում ևս բախվել է այն նույն լրացուցիչ քննչական գործողությունների իրականացման անթույլատրելիությունը հիմնավորող դրույթների հետ, որոնք ներկայացված են, մասնա-

www.moj.am

վորապես ՍԳՈ-710 որոշման մեջ: Հետևաբար, կարծում ենք, որ գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտը չի հանդիսանում որպես լրացուցիչ նախաքննության համարժեք ընթացակարգ: Նոր պայմաններում նախնական քննության մարմինների գործունեության վրա ազդող գործոնների շարքում առանձնացվում են սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններ՝ նախապատվությունը տալով վերջիններին: Միևնույն ժամանակ, վերակենդանացվել են քրեական գործի հետադարձ ուղղորդման միևնույն և, գերիշխող մոտեցման համաձայն, անընդունելի լծակները: Լրացուցիչ նախաքննության էությունը ամփոփված է դրա անհրաժեշտությունն առաջացնող հիմքերի բովանդակությունում: Ամրագրելով որակապես նոր հիմք՝ քրեական դա-

տավարությունը խնդրո առարկա ընթացակարգային բնագավառում ընթանում է լիովին այլ ուղիով: Սակայն ակնհայտ ակնառու և, միաժամանակ, գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտը որպես լրացուցիչ նախաքննության համարժեք ընթացակարգ համարելու կասկածներ առաջացնող հանգամանք է հանդիսանում այն, որ հայրենական քրեական դատավարությունը չի հաղթահարել լրացուցիչ նախաքննության անթույլատրելիությունը հիմնավորող, և լայն քննարկումների տեղիք տվող վերը նշված հակասությունները, որոնք իրենցից ներկայացնում են լրացուցիչ քննչական և դատավարական գործողությունների խոչընդոտ հանդիսացող անհերքելի գործոններ:

<sup>1</sup> Տե՛ս Խաչատրյան Գ.Մ. Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելը: Աշխատությունը նախապատրաստվել և հրատարակվել է «Ֆեմիդա» ՀԿ-ի կողմից: Երևան, 2006, էջ 8:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս (2-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) - Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, էջ 224:

<sup>3</sup> Տե՛ս Направление судом уголовного дела на следствие. Гальперин И.М. Государственное издательство юридической литературы. М., 1960. С. 13.

<sup>4</sup> Տե՛ս Дегтярев В.П., Гаврилов Б.Я. Возврат к институту следования: за и против // Уголовный процесс. 2005г. N 2. С. 25-29; Зыкин В. Необходимо восстановить институт возвращения судом уголовных дел для дополнительного расследования Законность. 2005. N 8. С. 33-35.

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ Քրեական դատավարություն: Հատուկ մաս (2-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով): Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, էջ 274:

<sup>6</sup> Տե՛ս Постановление Конституционного суда Российской Федерации “По делу о проверке конституционности положений статей 125, 219, 227, 229, 236, 237, 239, 246, 254, 271, 378, 405 и 408, а также глава 35 и 39 Уголовно-процессуального кодекса Российской Федерации в связи с запросами судов общей юрисдикции и жалобами граждан” // Российская газета. 2003. 8 дек.

<sup>7</sup> Տե՛ս Азаров В., Баранов А., Супрун С. Возвращение уголовного дела для производства дополнительного расследования: правосознание и закон, толкование и применение // Уголовное право. 2004. N 2. С. 85.

<sup>8</sup> Տե՛ս Волколуп О.В. Система уголовного судопроизводства и проблемы ее совершенствования. СПб., 2003. С. 119.

<sup>9</sup> Տե՛ս Александров А., Белов С. Возвращение уголовного дела прокурору // Законность. 2004. N 12. С. 31.

<sup>10</sup> Տե՛ս Ежова Е.В. Институт возвращения уголовного дела прокурору. М.: Издательство “Юрлитинформ”, 2007. С. 45.

<sup>11</sup> Տե՛ս Վ. Ազարովի, Ս. Բարանովի և Ս. Սուպրունի, Օ.Վ. Վոլկովուպի նշված աշխատանքները, ինչպես նաև Зыкин В. Необходимо восстановить институт возвращения судом уголовных дел для дополнительного расследования// Законность. 2005. N 8. С. 33-35.

<sup>12</sup> Տե՛ս Жеребятъев И.В. Личность потерпевшего в современном уголовном судопроизводстве России. Монография. Оренбург, 2004. С. 144-145; Петуховский А. Восстановить институт возвращения судом уголовного дела на дополнительное расследование // Российская Юстиция. 2004. N 2. С. 47-49; Яценко Е. Размышления у парадного фасада УПК // Российская Юстиция. 2002. N 12. С. 66-67; Александров А., Белов С. Возвращение уголовного дела прокурору // Законность. 2004. N 12. С. 31-32.

<sup>13</sup> Տե՛ս Այստեղ և այսուհետ օրենքների հողվածների տեքստում առկա շեղագրումները՝ հեղինակի կողմից:

<sup>14</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ կետի, 414.2.-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի 24.07.2007թ.-ի որոշման 11-րդ կետ:

<sup>15</sup> Տե՛ս Баев О.Я. Уголовно-процессуальные исследования преступлений: система и ее качество. М. Издательство “Юрлитинформ”, 2007. С. 162-164.

<sup>16</sup> Տե՛ս Смирнов А., Калиновский К. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. СПб., 2004. С. 769.

<sup>17</sup> Տե՛ս Խոսքը Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի մասին է:

<sup>18</sup> Տե՛ս Կորագրումը Օ.Յ. Բակի կողմից: